ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"03" 02 2022թ. N 176-Ա

ՀՐԱՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 5 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված <<Ռեգնում>> ՍՊԸ-ին տրամադրել Արարատի մարզի միասնական երթուղիների սպասարկման իրավունք 10 տարի ժամկետով:

3. <<Ռեգնում>> ՍՊԸ-ի հետ կնքել ժամանակացույց հայտ-պարտավորությամբ ներկայացված քանակով ավտոբուսները ձեռք բերելու վերաբերյալ:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանին:

03.02.2022

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի

27 հունվարի 2022թ. ք. Երևան

2022 թվականի հունվարի 27-ին ժամը 11:30-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Սիմոնյանը
քարտուղար՝ Խ. Սողոմոնյանը
անդամներ՝ Ա. Խաչատրյանը
Տ. Գասպարյանը
Գ. Հարությունյանը
Ա. Հակոբյանը
Դ. Մելքոնյանը

Օրակարգում՝

2022 թվականի հունվարի 20-ին ժամը 11:00-ին կայացած Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի արդյունքների ամփոփումը:

Քննարկվեց՝

Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2022 թվականի հունվարի 20-ի մրցույթի մասնակցության համար հայտ ներկայացրած «Լիգա», «Ռեգնում» և «Սմարտ Լիգա» ՍՊ ընկերություններից հաղթող ճանաչելու հարցը:

Արձանագրվեց՝

1. Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2022 թվականի հունվարի 20-ի մրցույթին ներկա էին «Լիգա» ՍՊԸ-ից Գ. Գրիգորյանը, «Ռեգնում» ՍՊԸ-ից՝ Գ. Ֆրանգուլյանը, «Սմարտ Լիգա» ՍՊԸ-ից՝ Ժ. Փանոսյանը:

2. Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի մասնակցության համար հայտ ներկայացրած «Լիգա» և «Ռեգնում» ՍՊ ընկերությունները ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով մինչև 2022 թվականի հունվարի 19-ի ժամը 12:00-ն վերացրել են Հանձնաժողովի 2022 թվականի հունվարի 10-ի հատուկ նիստի թիվ 2 արձանագրությամբ նշված փաթեթներում առկա թերությունները:

3. «Սմարտ Լիգա» ՍՊ ընկերությունը թերությունները վերացրել է ոչ ամբողջությամբ, մասնավորպես՝ չի վերացրել 2022թ. հունվարի 10-ի հատուկ նիստի թիվ 2 արձանագրությամբ նշված սեփականության վկայականի հետ կապված թերությունը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշման պահանջներով՝

1. Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության 2022 թվականի հունվարի 20-ի մրցույթին մասնակցելու իրավունք տալ «Լիգա» և «Ռեգնում» ՍՊ ընկերություններին,

2. «Սմարտ Լիգա» ՍՊ ընկերությանը չթույլատարել մասնակցել Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված մրցույթին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 34-րդ կետի պահանջները:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22.1-րդ կետի պահանջները՝ մրցույթի ամփոփիչ նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում «Սմարտ Լիգա» ՍՊ ընկերության ներկայացրած Ձև N 12-ում նշված հաշվեհամարին փոխանցել հայտ-պարտավորությամբ մրցույթին մասնակցելու համար երթուղային ցանցը կազմակերպող մարմնի հաշվեհամարին փոխանցված ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք 35,950,000 (երեսունհինգ մլն ինը հարյուր հիսուն հազ.) դրամ գումարը:

4. Հաշվի առնելով, որ Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների

ընտրության 2022 թվականի հունվարի 20-ի մրցույթի արդյունքում «Լիգա» ՍՊ ընկերությունը հավաքել է 48,1 միավոր, իսկ «Ռեգնում» ՍՊ ընկերությունը՝ 54 միավոր, Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարված մրցույթում, համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ կետի, հաղթող ճանաչել «Ռեգնում» ՍՊ ընկերությանը հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

15 (տասնհինգ) հատ 2022 թ. արտադրության ՊԱԶ Վեկտոր նեքստ 8.8 մակնիշի և 72 (յոթանասուներկու) հատ 2022 թ. արտադրության ՊԱԶ-3203 վեկտոր մակնիշի՝ ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված ավտոբուսները,

և ըստ երթուղիների՝ մեկ ուղևորի համար առաջարկված հետևյալ փոխադրավարձերով՝

Հ/Հ	Երթուղու անվանումը և համարը	Փոխադրա-վարձը, դրամ	Սպասարկման համար պահանջվող ավտո-բուսների քանակը
1.	գ.Արարատ-Արտաշատ	150	2
2.	Վեդի-Արտաշատ	150	2
3.	Մասիս-Նոր Կյուրին-Արտաշատ	150	1
4.	Մասիս-Արտաշատ	150	1
5.	գ.Զանգակատուն-Վեդի	150	1
6.	գ.Զանգակատուն-Արարատ-Վեդի	150	1
7.	գ.Վերին Դվին-Արտաշատ	150	2
8.	Վեդի-Արարատ	150	2
9.	Արտաշատ–ՈԿՖ-Արարատ	150	1
10.	գ.Գետազատ-Արտաշատ-Նոր Ուղի	150	1
11.	գ.Բարձրաշեն-Արտաշատ-Տափերական	150	2
12.	գ.Ջրաշեն-Արտաշատ-Տափերական	150	1
13.	գ.Ռանչպար-Մասիս-Երևան	200	1
14.	գ.Նորաշեն-Արտաշատ-գ.Նոր Ուղի	200	2
15.	գ.Նարեկ-Երևան	300	3
16.	Արտաշատ-Երևան	300	15
17.	Արարատ-Երևան	500	8
18.	Վեդի-Երևան	500	8
19.	Մասիս-Երևան	200	8
20.	Մասիս-գ.Ազատաշեն-Երևան	200	3
21.	գ.Դվին-Երևան	300	4
22.	գ.Նոր Խարբերդ-Երևան	100	2
23.	Վեդի-Մարտունի	1000	1
24.	գ.Հովտաշատ-Երևան	200	1
25.	գ.Դաշտավան-Երևան	200	1
26.	Մասիս-գ.Ղուկասավան-Երևան	200	2
			76 փաստացի + 11 պահուստային

5. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հայտարարված միասնական երթուղիների համար ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթների 2022 թվականի հունվարի 20-ին կայանալիք Արարատի մարզի միասնական երթուղիների համար հայտարարության 7-րդ կետով սահմանված է, որ հայտատուի կողմից փակ ծրարով պետք է ներկայացվի երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների: «Ռեգնում» ՍՊ ընկերության կողմից մեկ ուղևորի փոխադրավարձը ըստ միջանկյալ կանգառների չի ներկայացվել: Չնայած, որ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան մեկ ուղևորի փոխադրավարձը ըստ միջանկյալ կանգառների չի գնահատվում, ուստի «Ռեգնում» ՍՊ ընկերությանն առաջարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել Արարատի մարզի միասնական երթուղիների փոխադրավարձը՝ ըստ միջանկյալ կանգառների:

6. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22.1-րդ կետի պահանջները՝ մրցույթի ամփոփիչ նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում «Լիգա» ՍՊ ընկերության ներկայացրած Ձև N 12-ում նշված հաշվեհամարին փոխանցել հայտ-պարտավորությամբ մրցույթին մասնակցելու համար երթուղային ցանցը կազմակերպող մարմնի հաշվեհամարին փոխանցված ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք 33,609,230 (երեսուներեք մլն. վեց հարյուր ինը հազ. երկու հարյուր երեսուն) դրամ գումարը:

7. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Խ. Սողոմոնյան

անդամներ՝ Ա. Խաչատրյան

Տ. Գասպարյան

Գ. Հարությունյան

Ա. Հակոբյան

Դ. Մելքոնյան